ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ.՝4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 50-Ա

25 դեկտեմբերի 2019 թվականի

Օրակարգի հաստատման մասին.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

2. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.
/Զեկ. Ա.Ղազարյան/

2 ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ .

/Զեկ. Ա.Ղազարյան/

3. ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. Ա.Ղազարյան/

4.ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Ղազարյան/

5.ԳԵՏԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Ղազարյան/

Ավագանու անդամներ՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

1.Ադամյան Հրայր

2.Ադամյան Վարդան

3.Ադամյան Սաշա

4.Այդինյան Դորիկ

5.Հարությունյան Գագիկ

6.Անյա Խաչատրյան

7.Ղազարյան Աշոտ

Գետահովիտ համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ.՝4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 51-Ն

25 դեկտեմբերի 2019 թվականի

ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Օրակարգի 2-րդ հարցի առնչությամբ հանդես եկավ գյուղապետ Ա. Ղազարյանը , ով մանրամասն (հոդվածներով) ներկայացրեց 2019թ. բյուջեի եկամտային և ծախսային մասերը.

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով և համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքի եկամուտները գոյանում են հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից, վարձակալությամբ տրված հողերից, գույքի վարձակալությունից:

Հողի հարկը գոյացել է 215 հա վարելահողից, 132 հա խոտհարքից, 105 հա տնամերձից, որի հարկը հաշվարկվել է 2901.4 դրամ, գույքահարկ՝ ֆիզիկական անձերից `4518.5 դրամ :

Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարը կազմում է 390.0 դրամ, որը գոյացել է 20 հա-ից :

«ՄԵԳԱԷՆԵՐԳԻ» ՍՊԸ-ի կողմից համայնքին , որպես նվիրատվություն, Գետահովիտ համայնքի կարիքները հոգալու նպատակով համայնքի բյուջե է նվիրաբերում տարեկան 6. 000.0 դրամ :

Տեղական տուրքերից վճարը հաշվարկվել է՝ 760.0 դրամ, որը գոյացել է համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքից՝244.000 դրամ, համայնքի տարածքում տեղակայված հեղուկ վառելիքի վաճառքից՝ 200.0 դրամ, շին. թույլտվության համար՝100.0 դրամ, բացոթյա հեղուկ վառելիքի թույլտվության համար՝60.000 դրամ , այլ գույքի վարձավճար 282.0 դրամ ,60.0 դրամ համայնքի տարածքում զվարճանքի օբյեկտների համար, տեղական վճարներ՝1390.000 դրամ, որից՝ 290.000 դրամ՝ աղբահանման վճար, 1100.000 դրամ՝մանկապարտեզի ծառայությունից օգտվելու վճար : Դոտացիան 2019 թվականի համար նախատեսված է 39835.8 դրամ :

եկամուտներ

հողի հարկ –2901.4

1.գույքահարկ –4518.5
2.հողի վարձավճար –390.0
3.տեղական տուրք –760.0
4գույքի վարձավճար-282.0
5.դոտացիա - 39835.8
6.նվիրատվություն-6.000.0
7.աղբահանություն-290.0
8.մանկապարտեզի ծառայություն-1.100.0

Ընդհամենը եկամուտներ –56077.7 :

- Աշխատավարձ –23037.3
- Պարգևատրում -0
- Էներգ. ծախս – 2.300.0
- Կոմունալ ծախսեր –600.0
- Կապի ծառ. –170.0
- Ապահովագրական ծախս-40.0
- Գործուղում – .0
- Տեղեկատվ. ծառ. –120.0
- Ընդհանուր բնույթի այլ ծախսեր – 900.0
- Մեքենաների սարք. ընթացիկ նորոգում-50.0
- Գրասենյակային նյութեր –160.0
- Տրանսպորտ. նյութեր –900.0
- Կենցաղ. և հանրային սննդի նյութ – 150.0
- Պետ. և համայնքների ոչ առևտ. կազմ. – 25000.0
- Այլ ընդհ. դրամաշ. – 741.0
- Պարտադիր վճարներ –80.0
- Հուղարկավորության նպաստ – 500.0
- Կրթական, մշակույթի և այլ նպատակների բյուջե -0
- Այլ նպաստներ բյուջեից – 700.0
- Պահուստայի միջոցներ-629.0
- Շենք-շինությունների կառուցում-0

Ընդամենը ծախսեր – 56077.7 դրամ:

Հիմք ընդունելով համայնքի եկամուտների և ծախսերի փաստացի տվյալները՝ ավագանին որոշեց՝

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին քննարկեց 2020 թվականի բյուջեի նախագիծն ըստ հոդվածների ընդունեց հետևյալ որոշումը.

- հաստատել եկամուտները 56077.7 ՝ ըստ հատված 1-ի,
- հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 56077.7 ըստ հատված 2-ի,
- հաստատել համայնքի 56077.7 բյուջեի ծախսերը՝ ըստ հատված 3-ի

Մանկապարտեզ ՀՈԱԿ-ն ունի երկու խումբ, որտեղ ընդգրկված է 50 երեխա: Գանձվում է յուրաքանչյուր երեխայի համար ծնողական միջոց 2000 դրամ:

Քանի որ ունենք համայնքային ծառայության թափուր պաշտոններ, տրամադրված նվազագույն աշխատավարձի փոխհատուցումը կտրամադրենք այդ հաստիքներին և կոմունալ ծառայություններին:

Թույլատրել համայնքապետարանին՝ բյուջեի եկամուտների 15%-ի սահմաններում կատարել տեղաշարժ:

Ավագանու անդամներ՝ կողմ-7 դեմ-0 ձեռնպահ-0

1.Ադամյան Հրայր

2.Ադամյան Վարդան

3.Ադամյան Սաշա

4.Այդինյան Դորիկ

5.Հարությունյան Գագիկ

6.Անյա Խաչատրյան

7.Ղազարյան Աշոտ

Գետահովիտ համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ.՝4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 52-Ա

25 դեկտեմբերի 2019 թվականի

ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 3-րդ հարցի առնչությամբ հանդես եկավ համայնքապետ Ա.Ղազարյանը, ով նշեց, որ Վարդան Ղազարյանը դիմել է Գետահովիտի համայնքապետարան 1-ին փ., 17/1 հասցեում գտնվող , 11-022-0026-0015 ծածկագրով 0.01120 հա հողամաս, որն իրեն է տրված անհատույց վարձակալության իրավունքով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին և Արմեն Այդինյանը *1*-ին փ., 17/2 հասցեում գտնվող , 11-022-0026-0012 ծածկագրով 0.0112 հա հողամաս, որն իրեն է տրված անհատույց վարձակալության իրավունքով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին : Գետահովիտ համայքի ավագանին քննության առնելով Վարդան Ղազարյանի 1-ին փ., 17/1 հասցեում գտնվող , 11-022-0026-0015 ծածկագրով 0.01120 հա հողամաս, որն իրեն է տրված անհատույց վարձակալության իրավունքով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին և Արմեն Այդինյանի *1*-ին փ., 17/2 հասցեում գտնվող , 11-022-0026-0012 ծածկագրով 0.0112 հա հողամաս, որն իրեն է տրված անհատույց վարձակալության իրավունքով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու դիմումները.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21 ենթակետով ,ՀՀ կառավարության << Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> 12 ապրիլի 2001թ.-ի թիվ 286 որոշման 20-րդ կետի գ/ ենթակետով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել Վարդան Ղազարյանին ուղղակի վաճառքով օտարել գ.Գետահովիտ 1-ին փ., 17/1 հասցեում գտնվող , 11-022-0026-0015 ծածկագրով 0.01120 հա հողամաս և Արմեն Այդինյանի *1*-ին փ., 17/2 հասցեում գտնվող , 11-022-0026-0012 ծածկագրով 0.0112 հա հողամաս ՝ 1քմ՝ 528 դրամ կադաստրային արժեքով:

Ավագանու անդամներ՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

1.Ադամյան Հրայր

2.Ադամյան Վարդան

3.Ադամյան Սաշա

4.Այդինյան Դորիկ

5.Հարությունյան Գագիկ

6.Անյա Խաչատրյան

7.Ղազարյան Աշոտ

Գետահովիտ համայնքի ղեկավար Ա.Ղազարյան